ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքային համայնքի /այսուհետ՝ Համայնք/ ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքի ղեկավարի աշխատակազմում համայնքային ծառայության հեռևյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

1.Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր՝3.1-7)

Առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ՝

ա/ իրականացնում է քաղաքացիների սպասարկման գրասենյակի փաստաթղթաշրջանառությունը.
բ/ ըստ անհրաժեշտության կազմում է ա/ կետում նշված փաստաթղթաշրջանառության հաշվետվություններ, վերլուծություններ ու տեղեկանքներ.
գ/ ուսումնասիրում է քաղաքացիների ընդունելության և նրանցից ստացված դիմումների քննարկման ու ընթացք տալու վերաբերյալ գանգատներն ու առաջարկները, արդյունքների մասին զեկուցում աշխատակազմի քարտուղարին.
դ/ տեղեկատվություն ստանալու հարցերով դիմած քաղաքացիներին ապահովում է անհրաժեշտ խորհրդատվությամբ և տեղեկատվությամբ.
ե/ վարում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի գործավարությունը և փաստաթղթաշրջանառությունը.
զ/ աշխատանքի վայրում կամ տնային այցելությամբ ուսումնասիրում է խնամակալության և հոգաբարձության կարիք ունեցող անձանց խնդիրները և կազմում, աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում եզրակացություններ ու առաջարկություններ.
է/ արձանագրում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստերը.
ը/ իրականացնում է իր գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, գրավոր առաջարկությունների, եզրակացությունների ու այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.
թ/ մասնակցում է աշխատակազմի աշխատանքային ծրագրերի մշակմանը.

Առաջատար մասնագետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա/ առնվազն միջնակարգ կրթության առկայություն
բ/ ունի ՀՀ Սահմանադրության, 'Համայնքային ծառայության մասին', 'Տեղական ինքնակառավարման մասին', 'Իրավական ակտերի մասին', 'Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու

կարգի մասին՝ Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին՝ N 164-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011 թ. սեպտեմբերի 13-ի Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին՝ N 69-Ա-1 հրամանի, աշխատակազմի կանոնադրության ու աշխատակարգի և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
է/ անհրաժեշտ գ/ տիրապետում տեղեկատվությանը.
դ/ ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կանցկացվի 2012թ. ապրիլի 19-ին.. ՝ ժամը 12:00-ին, ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքապետարանի շենքում՝ ք. Ջերմուկ :

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ՝ քաղաքացիներ/:

Դիմող քաղաքացիները Ջերմուկի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմ կամ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

ա/դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,

բ/տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ/արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

դ/մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,

ե/անձնագրի պատճենը:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ ապրիլի 4-ը 2012թ.՝ մինչև ժամը 18.00-ը:

Մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Համայնքի ղեկավարի աշխատակազմ /ք.Ջերմուկ հեռախոս՝ 0287-2-13-07/ և ՀՀ Վայոց ձորի

մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն հեռախոս՝ 0 (281) 23061/:

Ջերմուկի քաղաքային համայնքի ղեկավար՝ **Վ.Հովհաննիսյան**